Forbes

№06 (123) 2014

www.forbes.ru

BACK IN THE USSR

Рейтинг городов бывшего Советского Союза

Владелец АФК «Система» ***Владимир Евтушенков*** *— о правилах бизнеса на постсоветском пространстве*

«Государство всегда поставит тебя на место»

А также:

Как **питерские реставраторы** намыли порт в Финском заливе

Рекомендованная розничная цена — 140 руб
Austria €7.50, France €7.50, Germany €7.50, Greece €7.50
Italy €7.50, Luxembourg €7.50, Switzerland SFr 12.90

Рейтинг городов

Армения/Ереван/ бизнес-климат

ГОРОД В СТИЛЕ ДЖАЗ

Почему заниматься бизнесом в столице Армении одновременно легко и сложно.

Текст:
Ксения Докукина
Фото:
Артем Голощапов для Forbes

Forbes հեղինակավոր ամսագրի ռուսական պարբերականի հունիսյան համարում տեղ է գտել ծավալուն հոդված Հայաստանի բիզնես միջավայրի վերաբերյալ: Նյութի հեղինակ Քսենիա Դոկուկինան անդրադառնում է նաև «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը:

Հոդվածագիրը, մասնավորապես, նշում է. «Գազպրոմ»-ի հայաստանյան «դուստրը» երկրի էներգետիկ ոլորտում խոշորագույն ներդրողն է, շուրջ 900 մլն դոլար և խոշորագույն գործատուն՝ ընկերությունն ունի ավելի քան 7000 աշխատակից:

Գազը Հայաստանի համար հիմնական էներգակիրներից է: Հայաստանում տրանսպորտի 60 տոկոսն աշխատում է գազով, իսկ հասարակական տրանսպորտի հատվածում այդ ցուցանիշը հասնում է 95 տոկոսի: «Ազնվորեն խոստովանեմ, որ Հայաստանում ոչ մի խնդիր չկա, այստեղ կարելի է հանգիստ բիզնես վարել և «Գազպրոմ»-ի նման ընկերությունն այստեղ դեռ ոչ մի դժվարության չի բախվել», - ասում է «Գազպրոմ Արմենիա»-ի ղեկավար Վարդան Հարությունյանը, որն ընկերությունում աշխատում է 1999 թվականից:

Հայաստանում, որտեղ գազաֆիկացման մակարդակը գերազանցում է 95 տոկոսը, «Գազպրոմ»-ը մեծ դերակատարություն ունի: Համագործակցության մեխանիզմները ևս մեկ անգամ դրսևորվեցին անցած տարվա դեկտեմբերին: Այն ժամանակ «Գազպրոմ»-ի Վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերը ժամանել էր Հրազդան, Հայաստանի խոշորագույն ջերմային կայանի՝ Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի ամբողջական ծավալով շահագործման հանձնելու առիթով: Էներգաբլոկը կառուցվել էր «ՀայՌուսգազարդ» ընկերության կողմից, որի 80 տոկոսը պատկանում էր ռուսաստանյան ընկերությանը, իսկ 20-ը՝ Հայաստանի կառավարությանը:

Միլլերը և Հարությունյանը նաև ստորագրել են 2014-2018թթ. Հայաստան բնական գազ ներմուծելու մասին պայմանագիրը, իսկ «Գազպրոմ»-ը դարձել է «ՀայՌուսգազարդ»-ի 100-տոկոսանոց սեփականատերը, ընկերությունը վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա»-ի»: